# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 17 ապրիլի 2018թ. թիվ 28 որոշմամբ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ 2018թ.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... 4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ..... 4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... 6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... 11
2.4. Պատվիրակված ծառայություններ ..... 12
2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ..... 12
2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... 13
2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ..... 13
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ..... 14
3.1. Համայնքի զարգացման տեսլական ..... 14
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... 17
4. ՀՀԶԾ ֆինանսավորում ..... 28
5. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր ..... 30

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

*Երկար տարիների անձնանվեր և անշահախնդիր աշխատանքը լիարժեք առիթ է ստեղծում ասելու, որ «ասվածը արված է»: Իմ կյանքի 19 տարիները նվիրել եմ համայնքային ծառայությանը և ոչ մի վարկյան չեմ փոշմանել դրա համար: Ամեն վայրկյան բնակչության խնդիրներով և հոգսերով ապրելը, յուրաքանչյուր բնակչի խոսքը լսելի դարձնելը և յուրաքանչյուր կատարվելիք աշխատանքի համախմբված կատարումը այսօր դարձել է տեսանելի և ստացել իր բացառիկ գնահատականը: Ստացված և գնահատված աշխատանքն է, որ առաջացնում է ոգևորություն, նոր մտքերի հղում և ավելիին հասնելու ձգտում: Սակայն այս ամենի հետ մեկտեղ ակտիվ զարգացող աշխարհի շեմին անհրաժեշտ է ամենօրյա լրջագույն աշխատանք, իրազեկվածություն և իմաստություն համայնքում առկա խնդիրները հաղթահարելու համար: ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքը մարզի համար ունի տուրիստական և տնտեսական կարևորագույն նշանակություն: Մեր պարտքն է կարևորել այդ հանգամանքը և լծվել համայնքում այդ ոլորտների առավել զարգացման և բնակչի բարօրության ամրապնդման գործին:*

***Գյուլագարակ համայնքի ղեկավար Մհեր Գևորգյան***

*Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են՝*

1) *բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը.*
2) *համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը և տուրիզմը.*
3) *հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը և մշակույթի զարգացմանը.*
4) *նոր աշխատատեղերի ստեղծում.*
5) *նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները.*
6) *բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը.*

*Համայնքի պարտադիր խնդիրներն են՝*

1) *համայնքի կայուն զարգացումը.*
2) *գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.*
3) *նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.*
4) *համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.*
5) *համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.*
6) *համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.*
7) *համայնքներում գյուղատնտեսության և տուրիզմի զարգացման խթանումը.*
8) *համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.*

*Համայնքում առկա հիմնախնդիրները*

1) *աշխատատեղերի բացակայություն ,*
2) *բնակչության սոցիալապես անապահով վիճակ,*
3) *ոռոգման ջրի բացակայություն,*
4) *առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն ,*
5) *ներհամայնքային ճանապարհներ կառուցում ,*
6) *արոտավայրերի սակավություն*
7) *արոտավայրերում անասունների խմելու ջրի բացակայություն*
8) *համայնքային ենթակառուցվածքների նորոգում:*

*Լուծման ուղիները*

1) *լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում,*
2) *աշխատատեղերի ստեղծում,*
3) *բարերարների և դոնոր կազմակերպությունների ներգրավում,*
4) *երկարաժամկետ վարձակալությամբ /լիզինգ/ գյուղտեխնիկայի և գործիքների տրամադրում ցածր տոկոսադրույքով կամ պետական սուբսիդավորմամբ:*

*Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):*

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

*ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքը գտնվում է Զորագետի աջ ափին՝ Բազումի լեռնաշղթայի երկայնքով, ծովի մակարդակից 1400մ բարձրության վրա: Գյուլագարակ համայնքը հարակից է Ստեփանավան քաղաքին և գտնվում է մարզկենտրոն Վանաձորից 17 կմ հյուսիս-արևմուտք, իսկ մայրաքաղաքից 150 կմ հեռավորության վրա, սահմանակից է Ստեփանավան, Լոռի Բերդ, Բազում, Զորագյուղ համայնքներին:*

*ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքը կազմում է 19975 հա:*

*Ձմռան տևողությունը մոտ 4 ամիս է, գարունը մեղմ է, իսկ ամառը զով: Ագրոկլիմայական շրջանացմամբ՝ կլիման չափավոր մեղմ է, արտահայտված խոնավությամբ:*

*Համայնքը հիմնադրվել է 2017թ-ին, կազմված է Կուրթան, Վարդաբլուր, Հոբարձի, Գյուլագարակ, Գարգառ, Պուշկինո, Ամրակից բնակավայրերից: Բնակչության հիմնական մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանից, Սպիտակի և Գուգարքի շրջանից, իրենց հետ բերելով շատ գեղեցիկ ավանդույթներ և սովորույթներ, որոնք արդիական են բոլոր ժամանակների համար:*

***ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ***

*Գյուլագարակ համայնքի բնակչությունը 2018թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 9268 մարդ:*

***Աղյուսակ 1: Գյուլագարակ համայնքի ժողովրդագրության վերաբերյալ ցուցանիշներ 01.01.2016 թվականի դրությամբ***

| Հ/h | Ցուցանիշները | Ընդամենը |
|---|---|---|
| 1. | Առկա բնակչության թիվը, այդ թվում՝ | 8332 |
| | 0-4 տարեկան | 490 |
| | 5-6 տարեկան | 242 |
| | 7- | |
| | 14 տարեկան | 872 |
| | 15-17 տարեկան | 310 |
| | 18տարեկան | 99 |
| | 16-62 տարեկան | 5540 |
| | 46-62 տարեկան | 323 |
| | 63 և բարձր տարիքի | 1089 |

*Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 19975 հա է:*

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը

*Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն՝ 206 միլ.դրամ*
*Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 31.7 (%),*

*Ծառայությունների բնագավառում համայնքի հիմնական ձեռնարկություններն են՝*

*Համայնքում առկա են մեծ, փոքր և միջին ձեռնարկատիրություններ, ուսումնական հաստատություններ և այլ կառույցներ: Չկան գործող արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ բնակչությունը կունենա հիմնական աշխատանք, հացի խնդիրը լուծում են սեփականատերերի մոտ ունեցաց սակավ աշխատանքով և ֆինանսական միջոցներով: Համայնքում գործում են սննդի 7 և առևտրի 36 կետեր:*

*Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են կարտոֆիլը, ցորենը, գարին, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները, մեղրը, որոնց իրացման հիմնական շուկա է ՀՀ Լոռու մարզը:*

*Համայնքը աչքի է ընկնում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվածների մեծ քանակով: Համայնքում տարեց տարի զարգանում է տուրիզմը, քանի որ կլիման բարենպաստ է՝ ամռանը զով, ձմռանը՝ ցրտաչունչ: Գյուլագարակում է գտնվում տարածաշրջանի համար կարևորագույն տուրիստական նշանակություն ունեցող <<Դենդրոպարկ>> բուսաբանական այգին:*

- *Գյուլագարակ բնակավայրում պահպանվել է 6-րդ դարի Տորմակադուռ միանավ եկեղեցին՝ իր հետաքրքիր կերտվածքով: Ունի վերանորոգման կարիք, քանի որ կիսով չափ քանդվել է հարձակումների և երկրաշարժերի պատճառով, սակայն չի կորցրել իր հմայքը: Գյուղի կենտրոնում է Գյուլագարակի եկեղեցին, որի ծածկը փլվել է 1988-ի երկրաշարժին: Գյուլագարակում է գտնվում հայտնի <<Սոճուտ դենդրոպարկը>>:*

*Կուրթան բնակավայրում է գտնվում 10-րդ դարի Հնեվանքի վանական համալիրը: Համալիրը կիսով չափ ավերված է: Կիսականգուն է մնացել նաև 6-7-րդ դդ Գետևանի եկեղեցին: Գյուղում գործում է թանգարան: Հայտնի է գյուղի ձորն իր բնությամբ:*

*Վարդաբլուրում կիսականգուն է 6-րդ դարի Ջգրաշենի եկեղեցին, Աշոտ երկաթի ամրությունը՝ լեռան գագաթին: Հայտնի են Վարդաբլուրի լճերը՝ իրենց գեղատեսիլ հմայքով:*

*Հոբարձիում կիսականգուն է 7-րդ դարի գյուղի եկեղեցին:*

*Գարգառը հայտնի է իր աշխարհագրական դիրքով և փարթամ բնությամբ:*

*Պուշկինոն հայտնի է որպես հիանալի ամառանոց, որ ամեն տարի հարյուրավոր հովեկների է ընդունում:*

*Ամրակիցում կանգուն է մնացել գյուղի ռուսական հնամենի եկեղեցին, որ հետաքրքրություն է առաջացնում հատկապես ռուս այցելուների շրջանում:*

- *դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ,*

*Համայնքը աչքի է ընկնում կրթական բարձր մակարդակով: Համայնքում գործում է 7 միջնակարգ դպրոց, 5 մանկապարտեզ և 1 արվեստի դպրոց, ուր ուսանում են 46 սաներ:*

*Զբաղվածության մակարդակը միջինից բարձր է, համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածների թիվը կազմում է բնակչության 60%-ը:*

## 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

*Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել ծրագրեր, որոնք համայնքի զարգացման խնդիրները կլուծեն հիմնովին՝*

*1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.*

*2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.*

*3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.*

*4) նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.*

*5) համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.*

*6) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.*

*7) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.*

*8) բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կառավարման արդյունավետությունը:*

*9) ներհամայնքային ճանապարհների բարեկարգում տարիների ֆինասական վերլուծությունները և գալիք տարիների կանխատեսումները:*

*Մինչև սույն ծրագրի կազմման օրը 2018թ-ի ընթացքում համայնքը արդեն ներկայացրել է 3 խոշոր ծրագրեր: Առաջինը համայնքի ընդհանուր կոմունալ ծառայության ծրագիրն է, որը ներկայացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին. ծրագրի բյուջեն 166 մլն դրամ: Երկրորդ ծարգիրը Տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը ներկայացված գիշերային լուսավորության ծրագիրն է, որի բյուջեն 28 մլն. դրամ է: Երորրդը Գարգառ գյուղի խմելու ջրի ջրագծի ծրագիրն է, որի բյուջեն 13 մլն. դրամ է: Առաջիկա տարիներին համայնքում 8.000 դելարի գիշերային լուսավորության ծրագիր է նախատեսում իրականացնել Կարմիր խաչ հասարակական կազմակերպությունը: 2019 թ-ին ծրագրում ենք վերանորոգել Կուրթանի սպորտդահլիճի հատակը, Վարդաբլուրի մշակույթի տան տանիքը: Մինչև 2022 թ-ը նախատեսվում է վերանորոգել և մասամբ ասֆալտապատել Հոբարձու ճանապարհները, վերանորոգել Գյուլագարակի եկեղեցին,բարեկարգել Ամրակիցի ճանապարհները:*

## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

*Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2017-2022 թվականների փաստացի բյուջեները և գալիք հինգ տարիների կանխատեսումները.*

***Աղյուսակ 6: Համայնքի 2017-2018 թվականների փաստացի բյուջեները և 2019-2022թվականների բյուջեների կանխատեսումները***

| | Եկամտի տեսակը | Փաստացի | | | Կանխատեսվող | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017թ | 2018թ | 2019թ | 2020թ | 2021թ | 2022թ. |
| 1 | Հարկային եկամուտներ և տուրքեր | | | | | | | | |
| 2 | Հողի հարկ | | | 32318.7 | 32647.4 | 32647.5 | 32647.0 | 32647.0 | 32647.0 |
| 3 | Գույքահարկ | | | 16308.3 | 17276.0 | 17276.0 | 17278.0 | 17280.0 | 117280.0 |
| 4 | Տեղական տուրքեր | | | 1568.0 | 1055.0 | 1100.0 | 1150.0 | 1150.0 | 1150.0 |
| 5 | Առանց տեղ.տուրքի գանձվող վճարներ | | | 7674.1 | 1660.0 | 1660.0 | 1660.0 | 1660.0 | 1660.0 |
| 6 | Համայնքային սեփ. համարվող հողի վարձավճար | | | 6514.1 | 1650.0 | 1700.0 | 1700.0 | 1750.0 | 1750.0 |
| 7 | Պաշտոնական տրանսֆերտներ դոտացիա | | | 139816.1 | 140000.0 | 140000.0 | 145000.0 | 150000.0 | 160000.0 |
| 8. | Պետբյուջեից սուբվենցիա | | | - | - | - | - | - | - |
| 9. | Կապիտալ ներքին դրամաշնորհներ | | | - | - | - | - | - | - |
| 10 | Կապիտալ արտաքին աղբյուրներ | | | | - | | | | |
| 11. | Տեղական վճար | | | 288.0 | 6665.3 | 6665.3 | 6670.0 | 6670.0 | 6680,0 |
| 12. | Օրենքով և իրավ.ակտերով սահմանված համայնք բյուջե մուտք.ենթակա գումար | | - | - | - | - | - | - | - |
| 13. | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | 14537.2 | 20813.1 | 500.0 | 500.0 | 1000.0 | 5000. |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | | | | ***218997.5*** | ***221766.8*** | **201548.8** | **201550.** | **212157.** | **326167.** |

| Ծախսի տեսակը | Փաստացի | | | Կանխատեսվող | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2017թ | 2018թ | 2019թ | 2020թ | 2021թ | 2022թ |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, | | | 116692.0 | 103100.780 | 103100 | 103100.0 | 103200.0 | 103200.0 |
| Տնտեսական հարաբերություններ | | | 8356.8 | 14900.0 | 14900.0 | 14900.0 | 14900.0 | 14900.0 |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | 3153.4 | 6030.0 | 7000.0 | 7000.0 | 7000.0 | 7000.0 |
| Բնակարանային շինարարություն եվ կոմունալ ծառայություն | | | 14868.7 | 11500.0 | 11500.0 | 11500.0 | 11500.0 | 11500.0 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | | | 8049.8 | 19062.0 | 19062.0 | 19062.0 | 19062.0 | 19062.0 |
| Կրթություն | | | 28908.7 | 40320.0 | 50320 | 50320 | 50320 | 50320 |
| Սոցիալական պաշտպանություն | | | 12510.0 | 6180.0 | 7000.0 | 7000.0 | 7000 | 7000 |
| Այլ ծախսեր | | - | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ*** | | | ***192839.4*** | ***201392.7*** | ***213182.0*** | ***213182.0*** | ***213382.0*** | ***213382.0*** |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

*Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոնները բազմաթիվ են, որոնք փոխկապակցված են: Ստորև ներկայացնում ենք դրանցից կարևորագույններնը.*

1) *ֆինանսական միջոցների սակավությունը.*
2) *ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը.*
3) *մշակութային կյանքի պասիվությունը,*
4) *արդի գյուղտեխնիկայի անհասանելիությունը.*
5) *աղբամանների բացակայությունը.*
6) *ձեռնարկությունների ոչ բավարար քանակ.*
7) *երիտասարդների միգրացիան.*
8) *պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը.*
9) *գյուղարտադրանքի իրացման հետ կապված դժվարությունները, ցածր գները.*
10) *իրացման խնդրի հետ կապված փոքր քանակությամբ արտադրողականությունը*
11) *սակավ և ժամանակակից պահանջների չբավարարող աշխատուժ.*
12) *ցածր ծնելիության մակարդակ:*

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

***Համայնքի ուժեղ կողմեր***

- *Համայնքում խմելու ջրի առկայությունը*
- *Համայնքի գազաֆիկացումը*
- *Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների առկայությունը*
- *Համայնքում հեռախոսակապի, ինտերնետ կապի և հեռուստատեսության առկայությունը*
- *Համայնքում հասարակական ոչ առևտրային կազմակերպության առկայությունը*

- *Մեղվաբուծության առկայություն*
- *Համայնքի գիշերային լուսավորության ցանցի առկայությունը*
- *Հակակարկտային կայանների առկայություն*
- *Զբոսաշրջային կենտրոնների առկայությունը*
- *Գյուղի աշխարհագրական դիրքը*

***Համայնքի թույլ կողմեր***

- *Ֆինսական միջոցների սղությունը,*
- *Բարերարների և դոնոր կազմակերպությունների բացակայություն,*
- *Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ,*
- *Գյուղմթերքների արտահանման դժվարություն,*
- *Սպառման շուկաների դժվար հասանելիություն,*
- *Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման համակարգերի բացակայություն ,*
- *Գյուղտեխնիկայի ոչ բավարար քանակ:*

***Հնարավորություններ***

- *Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը,*
- *Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման,*
- *Գյուղ արտադրական ծավալների ավելացման հնարավորություն,*
- *Պետական, տեղական և միջազգային ծրագրերի հնարավորություն ,*
- *Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման լայն հնարավորություններ:*
- *Տուրիզմը մեծածավալ զարգացման հնարավորություն*

***Սպառնալիքներ***

- *Բնակչության արտագաղթ,*
- *Ծնելիության ցածր մակարդակ,*
- *Տնտեսական վիճակի վատթարացում,*
- *Անտառային տարածքների ոչնչացում,*
- *Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղ մթերքների վրա,*
- *Գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմի բացակայություն,*
- *Կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից:*

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

*Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքների, բարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ ունեցող, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող վայր և վերջապես մեծ տուրիստական կենտրոն:*

***Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝***

1) *Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում, որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկություններ,*
2) *Համայնքի բնակչության բնական աճ: Գործարար միջավայրի բարելավում, աշխատատեղերի ստեղծում, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում՝ նորաստեղծ ընտանիքներին ֆինանսական օգնության տրամադրում,*
3) *Համանքի ճանապարհների և ենթակառույցների մասով նախատեսվում է ներհամայնքային փողոցների հարթեցում կամ ասֆալտապատում, մասնավորապես շեբենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում,*
4) *Երիտասարդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումների կազմակերպում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում,*
5) *Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային հողերի վարձակալությամբ տրամադրում՝ հասարակական և արտադրական կառույցների և առևտրի կետերի կառուցման համար,*
6) *Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտհրապարակի կառուցում, և կահավորում:*
7) *Բարեգործության խթանման բնագավառում նախատեսվում է արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին պարբերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ, ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները,*
8) *Համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,*
9) *համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,*
10) *Համայնքում կարտոֆիլի և մրգերի պահեստավորման, տեսակավորման և վերամշակման հնարավորությունների ստեղծում,*
11) *Համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,*
12) *Նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:*

***Պարտադիր ցուցանիշներն են՝***

- *Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),*
- *Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,*
- *Համայնքի գրանցված բնակիչների թիվ փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով,*

- *Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ),*
- *Ոչ գյուղատնտեսական բնագավառում ֆորմալ զբաղվածության աճ,*
- *Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով),*
- *Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից,*
- *Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով,*
- *Ծնողների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից,*
- *Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ,*
- *Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ,*
- *Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով,*
- *Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից,*
- *Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայքից դուրս մշակութային օջախներ,*
- *Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ,*
- *Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն,*
- *Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ,*
- *Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով,*
- *Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից,*
- *Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով,*
- *Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին,*
- *Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով,*
- *Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ,*
- *Բերքատվության տարեկան աճ,*
- *Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով,*
- *Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ:*

## 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,

2) Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,
3) Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանում.
4) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
5) Համայնքի բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.
7) Համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.

## 4.ՀՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Այլ աղբյուրներ:

**Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/**

1.Արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում
2.Գյուղտեխնիկայի ձեռքբերում
3.Համայնքի փողոցների և ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում
4.Մշակոիյթի տների վերանորոգում
5.Զբոսայգիների կառուցում
6 Սպորտ հրապարակի կառուցում
7. Եկեղեցիների վերանորոգում
8.Մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում
9. Աղբահանության կազմակերպում

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

«Գյուլագարակ համայնքի կոմունալ ծառայություն»
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված | Աղբահանության կազմակերպում, ճանապարհների մաքրում սպասարկում և բարեկարգում, ջրագծերի կառուցում և ընդհանուր կոմունալ սպասարկում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագիրը | | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքաբնակների եկամուտների աճի ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2018 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 10 | 15 | 20 | 25 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կոմունալ ծառայության ստեղծում | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2018 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 30 | 50 | 100 | 100 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.<br>1.2. ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա, ստեղծել համապատասխան ՀՈԱԿ | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընդհանուր բյուջեն՝ 166 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 3.Աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչությունը, ձեռնարկատերերը, տուրիստները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի նպատակն է Գյուլագարակ համանքի համար ապահովել կոմունալ ծառայությունների և սպասարկման նոր որակ, ծառայությունների սպասարկումը հասանելի դարձնել համայնքի ողջ բնակչությանը, վերջնականապես լուծել աղբահանության տարիներ շարունակ չլուծվող հարցը, ապահովել ճանապարհների մաքրման աշխատանքները, բարեկարգել համայնքամիջյան ու դաշտամիջյան դժվարանցանելի և վթարված ճանապարհները և այս ամենի արդյունքում ունենալ որոկյալ ծառայություններ և խնայված միջոցներ: | | | | | | |

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

«Գյուլագարակ համայնքի գիշերային լուսավորություն»
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի գիշերային լուսավորության ավելացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքաբնակների հարմարավետություն | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 5 | 10 | 15 | 25 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Գիշերային լույսերի տեղադրում | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 30 | 60 | 100 | 100 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.<br>1.2. կնքել պայմանագիրը և տեղադրել լուսատուները | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընդհանուր բյուջեն՝ 28 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Դրամական միջոցներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 թ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրով նախատեսվում է գիշերային լեդ լույսեր տեղադրել համայնքի 7 բնակավայրերում: Նախատեսվում է առկա սովորական լույսերը փոխարինել լեդ լույսերով՝ խնայողության և էֆեկտիվության բարձրացման նպատակով: Առկա 346 սովորական լույսերի համար ծախսը հնարավոր է կրճատել 30%-ով, եթե դրանք փոխարինվեն լեդ լույսերով: Հին լույսերի սյուները նորոգման կարիգ չունեն, իսկ նոր տեղադրվելիք 156 լեդ լույսերի սյուները լինելու են երկաթյա 108 մմ տրամագծով, ներկված են լինելու բաց կապույտ գույնով: | | | | | | |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Ջուր Գարգառին»
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Գառգառի խմելու ջրի հարցի լուծում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Գարգառի խմելու ջրի ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | Եկամտի աճ (%) | 0 | 0 | 10 | 15 | 20 | 30 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Փաստաթղթերի նախագծում և կառուցում | | | | | | |
| | Ցուցանիշներ (հատ) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 40 | 50 | 50 | 60 | 60 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. նախագծի պատվիրում<br>1.2. ձեռք բերել անհրաժեշտ շինանյութեր<br>1.3. Իրականացնել աշխատանքները<br>1.4. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընդհանուր բյուջեն՝ 13 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1. կամավորական աշխատանք | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Գարգառի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 թ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի հիմնական նպատակը<br>• Գարգառ բնակավայրի բնակիչներին խմելու ջրով ապահովելն է:<br>Ծրագրի ենթանապատակներն են.<br>• Կենսական պայմանների բացակայության պատճառով բնակչության արտահոսքի կանխումը<br>• Բնակավայրում տնտեսությունների թվի աճը<br>• Գյուղատնտեսության և ձեռնարկատիրության խթնումը<br>• Տուրիզմի ծավալների ընդլայնումը խթանելը<br>• Ախեստամոքսային և այլ հիվանդությունների կանխումը: | | | | | | |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

«Հբոսայգիների կառուցում»
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի | Բնակչի համար ստեղծել հանգստի պայմաններ, բարեկարգել համայնքի արտաքին |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| լուծմանն է միտված ծրագիրը | տեսքը: | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | Եկամտի աճ (%) | 0 | 0 | 0 | 10 | 15 | 15 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Բարձր արտադրողականությամբ և ժամանակակից գյուղտեխնիկայի ձեռք բերում | | | | | | |
| | Ցուցանիշներ (հատ) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 5 | 5 | 5 | 5 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. նախագծանախահաշվարկային գործողություններ<br>1.2. այգիների կառուցում<br>1.3. պաշտոնական բացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 700 հզ դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 1 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 1.7 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.դրամական միջոցներ<br>2.Աշխատուժ<br>3. տեխնիկա | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն, զբոսաշրջիկներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018- 2021թվականներ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի նպատակն է բնակչի համար ստեղծել առօրյա հանգստի վայր, ուր կհավաքվեն մեծահասակները, կխաղան փոքրերը: Այիգիները էապես կնպաստեն նաև համայնքի արտաքին տեսքի բարելավմանը և կգրավեն զբոսաշրջիկներին: Այգիները որոշ նախաձեռնողների հնարավորության կտան ամառային ամիսներին այնտեղ մանր առևտրով զբաղվել և շահույթ ստանալ: | | | | | | |

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

«Համայնքի փողոցների և ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված | Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագիրը | | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | աճ (%) | 10 | 15 | 20 | 25 | 30 | 40 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1.Փողոցների և ճանապարհների բարեկարգում | | | | | | |
| | Ցուցանիշներ (կմ) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 2 | 2 | 10 | 15 | 15 | 15 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները<br>1.3. Կատարել ներհամայնքային ճանապարհների վերանորոգում<br>1.4.Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 5 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 35 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.դրամական միջոցներ<br>2.Նախագծի առկայություն<br>3.Աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018- 2021թվականներ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Գյուլագարակ համայնքի ներհամայնքային ճանապարհների մի մասը՝ կենտրոնական փողոցը ասֆալտապատ է, իսկ մնացած մասը գրունտային է: Գրունտային ճանապարհների որոշ մաս նորմալ վիճակում է իսկ որոշ մաս անանցանելի է քանդված լինելու պատճառով: Ծրագրով նախատեսվում է բորեկարգել գրունտային ճանապարհները դրանցից կարևորագույնները ասֆալտապատել: | | | | | | |

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 6

«Կուրթանի և վարդաբլուրի մշակույթի տան վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված | Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագիրը | | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքաբնակների մշակութային կյանքի ակտիվացման ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | աճ (%) | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կահավորված և վերանորոգված արվեստի դպրոց | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 1 | 1 | 1 | 1 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները<br>2-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. կահավորում<br>2.2. ձեռք բերել անհրաժեշտ գործիքներ | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 2 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 20 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 22 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.դրամական միջոցներ<br>2.Նախագծի առկայություն<br>3.Աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2019- 2022թվականներ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Կուրթանի մշակույթի տունը տիպային մեծ և հարմարավետ շինություն է, որը ունի հատակի խմդիր: Հատակը հիմնովին նորոգման կարիք ունի: Վարդաբլուրի մշակույթի տունը ևս մեծ ու հարմար շենք է, սակայն տանիքի քանդված լինելու պատճառով շենքի լինելությունը տարեցտարի վտանգվում է: Ուստի դրանց վերանորոգումը անհրաժեշտություն է: | | | | | | |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 7

«Եկեղեցու վերանորոգում»
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Գյուլագարակի կիսավեր եկեղեցու վերականգնում: | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի ազգաբնակչության հոգևոր դաստիրակության | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Բնակչության ազգային հոգևոր և կրոնական ավանդույթների պահպանում և զարգացում | | | | | | |
| | Ցուցանիշներ (վերանորոգում %) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 0 | 30 | 60 | 80 | 100 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.<br>1.2. կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների համար | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Այլ աղբյուրներ՝ 10 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 10 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Դրամական միջոցներ<br>2.Նախագծի առկայություն<br>3.Աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2019- 2021թվականներ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Գյուլագարակի համար տարիների նպատակ է եղել եկեղեցու վերականգնումը որը կպահպանի հոգևոր և կրոնական ավանդույթները: Բավարար միջոցները չլինելու պատճառով  այդ մեծ ցանկությունը մնացել է անկատար: | | | | | | |

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  8

«Սպորտ հրապարակների կառուցում »

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Աշխուժացնել համայնքի սպորտային կյանքը | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 30 | 40 | 50 | 60 | 70 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1.Մարզային սպորտային մրցույթներում համայնքի ներգրավվածությունը | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 5 | 10 | 15 | 20 | 30 | 40 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ | | | | | | |

| | |
|---|---|
| գործողությունները | 1.1. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.<br>1.2. կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների համար |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 6 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Դրամական միջոցներ<br>2.Նախագծի առկայություն<br>3.Աշխատուժ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017- 2018թվականներ |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքում թերի է սպորտի ոլորտը: Չկա բավարար պայմաններ հատկապես երիտասարդներին համար սպորտային պարապմունքների անցկացման համար: Որոշ փոքր խմբակներ պարապմունքներն իրականացնում են դպրոցի, արվեստի դպրոցի ոչ հարմարավետ սենյակների պայմաններում: Ծրագրի լիարժեք կատարումը կնպաստի համայնքի երիտասարդների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ: |

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  9

«Անասնապահության խթանում, արոտավայրերի բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Արատավոյրերի բարելավումը և անասնապահության խթանում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Արոտավայրերի բարելավում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 5 | 20 | 30 | 40 | 60 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Հեռագնա արոտավայրերի ճանապարհների բարեկարգում | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
| | | 0 | 5 | 20 | 30 | 40 | 60 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. հետազոտական աշխատանքներ<br>1.2. նախահաշիվ նախագծում<br>1.3. ճանապարհների կառուցում<br>1.4. սերմացան | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 6 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման | 1.Դրամական միջոցներ | | | | | | |

| | |
|---|---|
| համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 2.Նախագծի առկայություն<br>3.Աշխատուժ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Դրամական միջոցների ձեռք բերում |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018- 2021թվականներ |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի արդյունքում կավելանա համայնքի անասնագլխաքանակը, դրան զուգահեռ կավելանա անասնակերի պահանջարկը: Ծրագրով նպատակ ունենք բարեկարգել մոտակա սարերի բինատեղիներ տանող ճանապարհները, որպեսզի հնարավորինս շատ ֆերմերներ գնան սար և այդպիսով թեթևան համայնքի գերծանրաբեռնված արոտավայրերը: |

## 4. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:
ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**Աղյուսակ 8: Մոնիթորինգի անձնագիր (2017-2021 թվականներ)**

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2022) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Ցուցանիշի թիրախային արժեք (2022) | Ցուցանիշի փաստացի արժեք (20212 | Ցուցանիշի կատարողական (2022) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի ստացման աղբյուր | Ցուցանիշի ստացման մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակա յին | Տարեկան | | |
| *ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),* | 40% | | 37% | | | 35% | | | 35% | | | 32% | | | 30% | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,* | 3,7 | | 11,1 | | | 0,7 | | | 2,1 | | | 7,4 | | | 0,3 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Համայնքի գրանցված բնակիչների թիվ փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով* | 0,6% | | 22,8% | | | 0,2% | | | 0,3% | | | 0,4% | | | 0,5% | | | V | ՀՀ Ոստիկանություն | Հարցում |
| *ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ)* | 40 | | 40 | | | 40 | | | 40 | | | 50 | | | 50 | | | V | ՊԵԿ տարածքային բաժին | Հարցում |
| *Ոչ գյուղատնտեսական բնագավառում ֆորմալ զբաղվածության աճ* | 0 | | 0 | | | 0 | | | 10 | | | 15 | | | 25 | | | V | ՊԵԿ տարածքային բաժին | Հարցում |
| *ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով)* | 73,5% | 75,1 | | | | 75,1 | | | 76,0 | | | 76,0 | | | 76,0 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից* | լավ | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | V | Նախադպրոցական հաստատություններ հաճախող | Հարցում/խմբային հարցազրույց/ ֆոկուս խումբ |
| *Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով* | 22,8% | | 22,8 | | | 22,8 | | | 25,8 | | | 30,8 | | | 30,8 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Ծնողների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից* | լավ | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | V | Արտադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում/խմբային հարցազրույց/ ֆոկուս խումբ |
| *ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ* | 5 | | 5 | | | 6 | | | 6 | | | 7 | | | 8 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի |
| *Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ* | 1 | | - | | | - | | | -- | | | - | | | - | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի |
| *Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով* | 60% | | 60 | | | 60 | | | 60 | | | 60 | | | 60 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի |
| *Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից* | բավարար | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | V | Արտադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում/խմբայի ն հարցազրույց/ ֆոկուս խումբ |
| *Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայքից դուրս մշակութային օջախներ* | այո | | | | | | | | | | | | | | | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի |
| *Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ* | 4 | | 4 | | | 5 | | | 8 | | | 13 | | | 15 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի |
| *Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն* | 3 | | 3 | | | 3 | | | 3 | | | 3 | | | 3 | | | V | Համայնքա-պետարան | Դիտարկում |
| *ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ* | 0 | | 0 | | | 1 | | | 1 | | | 1 | | | 2 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարավերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով* | 0 | | | | | | | | | | | | | | | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից* | 0 | | | | | | | | | | | | | | | | | V | Մարզական խմբակներ հաճախող երեխաների ու պատանիների ծնողներ | Հարցում/խմբային հարցազրույց/ ֆոկուս խումբ |
| *ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ և ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից* | բավարար | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | բավարար | | | V | Համայնքի բնակիչներ | Հարցում |
| *Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով* | 0 | | 0 | | | 90 | | | 90 | | | 90 | | | 95 | | | V | Համայնքի բնակիչներ | Հարցում |
| *Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին* | - | | | | | | | | | | | | | | | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով* | - | | | | | | | | | | | | | | | | | V | Համայնքա-պետարանրան/ ուղևորափո-խադրումներ իրականացնող ընկերություն (ներ) | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով* | 18% | | | | | | | | | | | | | | | | | V | Համայնքա-պետարանրան/ ուղևորափո-խադրումներ իրականացնող ընկերություն (ներ) | Փաստաթղթային ուսումնասի-րություն |
| *ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ* | 2 | | 2 | | | 3 | | | 3 | | | 5 | | | 5 | | | V | Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչներ | Հարցում կամ խմբային հարցազրույց/ ֆոկուս խումբ |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Բերքատվության տարեկան աճ* | 2 | | 1 | | | 2 | | | 2 | | | | | | 2 | | | V | Համայնքա | Հարցում |
| *Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով* | 100 | | 100 | | | 100 | | | 100 | | | 100 | | | 100 | | | V | Համայնքա/ՋՕԸ | Հարցում |
| *ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ.* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| *Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ* | 3 | | 5 | | | 5 | | | 5 | | | 5 | | | 5 | | | V | Համայնքա-պետարան | Փաստաթղթային ուսումնասի-ություն |

## ՀՀՋԾ նախագծի մշակման, քննարկման և հաստատման ժամանակացույց

| Ժամկետ | Աշխատանքներ | Պատասխանատու(ներ) |
|---|---|---|
| 2018-2022թթ | • Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>• Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ<br>• Իրականացնել աշխատանքները<br>• Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը<br>• Կատարել ներհամայնքային ճանապարհների վերանորոգում<br>• Ձեռք բերել անհրաժեշտ գործիքներ<br>• Նոր փեթակի տրամադրում մեղվապահներին, մոմաթերթերի տրամադրում, մեղվապահական գույքի տրամադրում, նոր մայրերի ձեռք բերում | Համայնքապետարան |